

**ԽԱՇԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ
Քանասիրական գիտությունների թեկնածու**

**ՄԻ ԱՆՀԱՅՑ ԷԶ
ԿՈՄԻՏԱՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Կոմիտասը, իրու ստուծագործող, այն մեծություններից չէ, որոնց կենսագորության մեջ ուսումնասիրողների համար կարող է անհայտ մնալ թեկուզ մեկ էջ...

Այսուհետեւ մեզ չհաջողվեց կոմիտասագիտության մեջ հայտնաբերել որևէ խոսք գրա կատարած թարգմանությունների մասին: Այն անուշադրության է մատնովել ոչ միայն կոմիտասագիտության կողմից, այլև հենց ինքը՝ կոմիտասը մի առանձին նշանակություն չի տվել այդ ասպարեզում իր կատարածին, այլապես հրատարակած «Խճճակենասագրականում», երբ թվարկում է իր կարդացած բանախոսությունները, խոսում է իր տպագրած հոդվածների և հրատարակած երգարանների մասին, կարող էր թվարկել նաև իր կատարած թարգմանությունների վերնագրերը, մինչդեռ նա ընդամենը նշում է, թե կատարել է «Թարգմանություններ (երաժշտության վերաբերյալ)»¹ և ուրիշ ոչինչ...

Եթե ընդունենք, որ ինքնակենասագրականը վերաբերվում է գրա միայն վաղ շրջանի գործունեությամբ, ապա կարող ենք ասել, որ հաջորդող շրջանի հրապարակումների ու գրառումների մեջ նույնական ո՞չ մի խոսք չկա իր կատարած թարգմանությունների մասին:

Այս ամենով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այդ բնագավառը ևս, թեկուզ և սահմանափակ չափով, գրադեցրել ու որոշ կշիռ է ունեցել գրա գործունեության մեջ: Եվ քանի որ կոմիտասին վերաբերվող ամեն մի մանրութ համարվող փաստն իսկ ումի գիտական արժեք, հարկ համարեցինք անդրադառնալ այս ասպարեզում նրա ծավալած գործունեությամբ:

Կոմիտասի թարգմանչական գործունեությամբ զբաղվելու պատեհությունը պայմանավորված է հետևյալ շարժադիրով:

Գևորգյան Հոգևոր Ծեմարանի տեսուչ Կարապետ Կոստանդանին Բենլինից 1896 թվականի դեկտեմբերին կոմիտասի հողած նամակի մեջ տեղ է գտել մի կարևոր հիշատակություն: «...Իմ գրած երաժշտական բեկորները, գրում է նա, - ուսուցչապեսուն հանձնառու եղավ տպել տպալու յուր ծաղքով»²:

Այս հանձնառությունը՝ իր երաժշտական բեկորները գերմաններնենով տպագրել տպալու իրականացումը կարող էր կոմիտասի համար ստեղծել այդ առաջարկը

¹ «Անահիտ», 1931, թիվ 1-2, էջ 2-6:

²Տե՛ս Կոմիտաս, «Նամակներ», Ե., 2000, էջ 83:

թարգմանությամբ իրականացնելու պատեհություն, որը սակայն տեղի չի ունենում: Նա չի շտապում, որովհետև ցանկանում է «խորը թափանցել» այդ գործի մեջ:

Ավելի ուշ, Կարապետ Կոստանյամին Բեռլինից գրած մի այլ նամակում Կոմիտասը նրան տեղյակ է պահում, որ «Եկեղեցական երաժշտության տեսական ամբողջապես վերջացրել» է, «պարապում է միայն գործնականով» և կարող է «ազատորեն երաժշտական երկեր հորինել»: «Մեր հոգևոր երգերից... շարունակում է նա, մի քանի կոտր պատրաստել եմ քառաձայն, վեց ձայն և ութ ձայն: Ուսուցչապետս առաջարկեց երգեր տալ. պատրաստում եմ մի քանիսն էլ, ապա երգել պետք է տա ինքը՝ ուսուցչապետս, մի որևէ եկեղեցում կամ Singakademie - ում, իբրև հոգևոր համերգ»³:

Ուսուցչապետ Ռ. Ծմիդտի հանձնարարականը Կոմիտասի համար դառնում է պարտավորեցնող: Նա սկսում է համապատասխան երգասացություններ ընտրել ու մշակել բազմաձայն խառը խմբի համար և ապա դրանց գրաբարյան տեքստերը թարգմանում է գերմաներեն:

Այս պարագայում թարգմանությամբ գրադարձությունը Կոմիտասի ստեղծագործական կյանքում ձեռք է բերում նոր և որոշ առումով իմաստավորված գործեղակերպ:

Ստանալով նման հանձնարարություն՝ Բեռլինում սովորող Կոմիտասը, օգտվելով ամառային արձակուրդից, ձեռնարկում և Պատարագի, շարակաների ու հոգեվոր երգերի միջից ընտրում է մեկ տասնյակից ավելի երգասացություններ և ուսուցչապետ Ծմիդտի պահանջին համապատասխան մշակում դրանք բազմաձայն խառը խմբի համար: Եվ ապա այդ երգերի գրաբարյան տեքստերը թարգմանում է գերմաներեն և տեղադրում նոտագրության տողատակում:

Նույն 1897 թվականի նեպտեմբերի 15-ի իր թարգմանած ու մշակած երգերի նոտագրությունները Կոմիտասը մաքրագրում և նախապատրաստում է՝ դրանք Ռիխմարդ Ծմիդտին հանձնելու համար:

Հարկ ենք համարում նշել, որ անհայտ պատճառով այդ երգերի նախատեսված կատարումները (որքան մեզ հայտնի է) ո՞չ գերմանական եկեղեցիներում և ո՞չ Էլ Զինգակաղենիայում չեն իրականացվել և մշակումները անհաթար վիճակում հասել են մեզ ու խնամքով պահպում են Երևանի գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի դիվանում 1648 համարի տակ:

Թե ինչպիսին է նոտագրության տողատակում գետեղված այդ թարգմանությունների որակը, մենք դրան չենք անդրադառնա, սակայն պատկերացումը ամբողջական դարձնելու նպատակով հարկ համարեցինք մեջքերել այդ թարգմանությունների վերնագրային ցանկը:

«Ehre dir» («Փառք քեզ, Տէր»),

«Heilig, heilig» («Սուրբ, սուրբ»),

«Im Weiten all» («Յամենալիմի»),

³ Նոյն տեղում, էջ 87:

«O, entzückender, furchtbarer Anblick» («Ով սքանչելի և տեսիլ ահատոր» խաչելութեան շարական),

«Jerusalem lobe den Herrn» («Գովեա Եղուսաղէմ» ճաշու շարական Ս. Զատկի):

«Halleluja h alleluja Der Hezz ist hoch» («Ալելուիա. Բարձր է ի վերայ»):

«Wer ist wie der Herr» («Ով է որպէս Տէր»):

«Heut erstand von den Toten» («Այսօր յարեալ ի մեռելոց փեսալն անմահ»):

«Heiligkeit heiligkeit» («Մրբութեան սրբոց» սրբաւցություն):

«O, prachtvolles» («Ով զարմանալի»):

«Der Himmel zerriss» («Երկինք պատառեալ»):

«Vater unser im Himmel» («Հայր մեր»)⁴:

Նույն ժամանակամիջոցում Կոմիտասը գերմաներենից հայերեն է թարգմանում և երկու գործ (պահպանվել են սևագրությունները).

ա) Օտար Ռոկետի «Նոր գարուն» երգը՝ խառը երգչախմբի համար, նոտագրության տողատակը՝ հայերեն և գերմաներեն⁵:

բ) Ծոտրմի «Ապրիլ» երգ դաշնամուրի ընկերակցությամբ, նոտագրության տողատակը՝ հայերեն և գերմաներեն⁶:

Բեղյանում ստվորող Կոմիտաս Վարդապետը, ինչպես հայտնի է, նամակագրական սերտ կապի մեջ էր Վիեննայի Միսիթարյան միաբանության հոգևոր հայերի հետ:

1898 թվականի մարտի սկզբներին Կոմիտասը մի նամակ է ստանում «Հանդես ամսօրյա» պարերականի խմբագիր Բ. Գ. Մենելիշյանից: Վերջինս Կոմիտասին խնդրում է մի հոդված թարգմանել իրենց ամսագրում տպագրելու համար: Այդ նամակը չի պահպանվել, սակայն հրապարակված է Կոմիտասի պատասխանը, որը հնարավորություն է տալիս պարզաբնում մտցնել այդ խնդրանքի մեջ:

«Ստացա Ձեր բարեկամական գիրը,- գրում է Կոմիտասը,- Արժանապատիվ Հայր, մեծ ուրախությամբ և հոժարությամբ պատրաստ եմ Ձեզ խոնարի ծառայություն մատուցանելու: Խնդրում եմ հաճեցեք փութով առաքելու հիշյալ տետրակը, զի համալսարանական դասախոսություններից ազատ եմ այժմ արձակուրդի պատճողով»⁷:

Այս անորոշ պայմանավորվածությունը որոշակիություն է ստանում «Հանդես ամսօրյայում» տեղ գտած մի հրապարակման շնորհիկ: Ամսագրի 1898 թվականի ապրիլյան համարում «Նոր հրատարակություններ» ենթավերնագրի տակ խմբագրությունը նշում է այս պատճողությունը:

⁴ Կոմիտաս, «Երկերի ժողովածու», Բա. 8, Ե., 1988, էջ 246:

Այս թարգմանության մշակումների նոտագրությունները առաջին անգամ հրապարակվել են Կոմիտասի «Երկերի ժողովածու» ութերրորդ հավորում, երաժշտագնն Գ. Գյողակյանի խմբագրությամբ ու ծանոթագրություններով (թիվն լշ 195-220, 245-246):

⁵ ՀԱ.Գ.Ա.Թ, Կոմիտասի Փ. 502:

⁶ Նույն տեղում, 549:

⁷ Տե՛ս «Գրական թերթ», Ե., 1991, № 18:

գիր հ. Գ. Մենեվիշյանը, խոսելով «Բյուզանդական պարբերագիր» համեմատ մեջ Նիկողայոս Մատի տպագրած ուսուերեն հոդվածի մասին, շատ կարևոր է գտնում «Պրոֆեսորի այդ ուսումնասիրությունը» և ասում, որ միտք ունի այդ աշխատությունը «ամբողջովին առաջ բերել հարմար առիթով»⁸ ամսագրի մեջ: Այս հրապարակումից որոշ ժամանակ անց, ապրիլի 16-ի նամակում Կոմիտասը Բեղյացից հայր հ. Գ. Մենեվիշյանին գրում է: «Հարգութարելամ... ստացել եմ Ձեր առաքած հոդվածը. դժբախտաբար, երկրորդ օրն արդեն ինձ բռնեց մի սաստիկ չերմ, որ երեք օր առաջ միայն բարեհաճնեցավ յուր այցելությունից վերադառնալու: Երեկ բավական առողջ զգալով թարգմանեցի հոդվածի առաջին կեսը, որը և առաքում եմ նամակին մետ, գուցե շարելու պատրաստություն տեսնեք, իսկ մնացյալ կեսն էլ մի քանի օրից կուտարկեմ»...

Թարգմանության վրացերեն և ասորերեն կտորների տեղերը բաց թողի, վանզի եւ չգիտեմ այդ լեզուն»⁹:

Այս ամենի շարումնակությունն է կազմում Կոմիտասի նույն թվականի ապրիլի 18-ին գրած նամակը՝ ուղղված ամսագրի խմբագրին: «Այսօր,- գրում է Կոմիտասը,- վերջացրի թարգմանությունը, թղթակին հետ մեկտեղ առաջում եմ: Նախընթաց նամակու հայտնելու մոռացած էի, թէ հ. Գալուստ Տեր-Մկրտչյանի խոսքերը, որ թարգմանությամբ առաջ էր բերել այ. Մարո, ավելի լավ կիհներ նույնիսկ «Արարատից» արտագրվեր, թեն ես էլ թարգմանեցի, որպես Մառն էր ոսուերենի փոխադրել:

Պետք է ասեմ,- շարունակում է նա,- որ այ. Մարի լեզուն ոչ միայն ծանր, այլև բուն, մաքրու ոսուերեն չէ, ուստի շատ մթություններ կային...»¹⁰:

Նույն «Համեմա ամսօրյայի» խմբագրին ուղղված իր հաջորդ նամակներից մեկում Կոմիտասը խոսք է բացում կենսագրական բնույթի մի հարցի վերաբերյալ, որը թեն ուղղակի փաստարկ չէ, սակայն կապ ունի իր կատարած թարգմանության, լեզվի ընտրության հարցում գործադրած մոտեցման հետ:

«Արժանապատիվ Հայր,- գրում է նա,- ես բնիկ կուտիմացի եմ, այնտեղ իսկ ծընված Սողոմոնյան ընտանիքից: Տասն տարեկան Գևորգյան Ծեմարան եկած և այնտեղ ավարտելով վարդապետություն ստացած: Արդեն 18 տարի է, Որուսաստանում կապրիմ, իբրև տաճկախոս ստիպված էի որուսահայոց բարբառն ուսումնասիրել և գործածել (ընդգծումը իմն է, Խ. Ս.), թեն ցարդ տաճկահպատակ եմ և կմնամ»¹¹:

Այս բացատրությունը Կոմիտասը տվել է թերևս այն նկատառումով, որպեսզի ենթատեքստում տրամաբանական դարձնի իր կատարած թարգմանությունը արևելյանիայերենով՝ «ոռուսահայոց բարբառով» կատարած լինելուն նախապատվություն տված լինելու համզամանքը:

⁸Տե՛ս «Համեմա ամսօրյա», Վիեմա, 1898, № 4, էջ 121:

⁹«Գրական թերթ», Ե., 1991, № 18, 16-ը ապրիլի նամակը:

¹⁰Նույն տեղում, 18-ը ապրիլի նամակը:

¹¹Նույն տեղում, 6-ը մայիսի նամակը:

1898 թվականի մայիս-հունիս ամիսների ընթացքում Կոմիտասը ո՞չ միայն ավարտում է Մադի հողվածի թարգմանությունը, այլև հասցնում է ժամանակին ուղարկել Վիեննա: Նույն թվականին «Հանդես ամսօրյա» պարբերականի օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարուն «Գալուստ Տեր-Մկրտչյան (Միաբան)։ Ազաթանգեղոսի աղբյուրներից: Թիշտակ դատակներաց Գորիա և Ծմոնի վկայից որ վկայեցին յՈւնիա» խորագրով լուս է տեսնում Կոմիտասի կատարած թարգմանությունը¹²: Տողատակին ամսագրի խմբագիր հ. Գ. Մենեվիշյանը հարկ է համարում տեղեկություն տալ թարգմանչի վերաբերյալ: «Մեր խոստման համեմատ,- գրում է նա-՝ կը հրատարակենք ներկա մատենախոսականը, որ մեր խնդրանոք հաճացավ ուսերեննե թարգմանել Արժանապատիկ Կոմիտաս Վ. ի Բեռլին»¹³:

Թարգմանության որպիսության մասին ծանուցում տալու նպատակով հարկ համարեցինք մի պարբերություն մեջ բերել Կոմիտասի թարգմանությունից:

«Հայ թարգմանության ժամանակը կարելի է մոտավորաբես միայն սահմանել: Չատ հավանական է, որ դա կատարված լինի ասորական շրջանում, այսինքն Հայոց գրականության առաջին դարերում: Չատ կարելի է նույնպես, որ այս թարգմանությունը հասնի մինչև Ե դարը, բայց դրա համար գլխավոր ապացուցը ոճի մաքրությունն է, իսկ գրաբարի ոճի մաքրության և Լեզվի ճշտության հասկացողությունը մեր մատղաց գիտության մեջ բավական պայմանական է, և այդ ճշշաներով միայն վերագրել այս կամ այն դարուն, կամ այս կամ այն քառորդ դարուն, հավասար է գուշակության»¹⁴:

Պետք է ենթադրել, որ ամսագրի խմբագիր Մենեվիշյանը գորի է եղել Կոմիտասի կատարած թարգմանությունից, այլապես մի նոր առաջարկով չէր դիմի նրան:

Կոմիտասի թարգմանչական գործունեության վերաբերյալ մեզ հայտնի հաջորդ փաստարկը նույնպես կապված է Գարբիել Մենեվիշյանի նախաձեռնության հետ: Վերջինս խմբագրություն առաքված գրքերի մեջ ծանոթանալով Լևոն Մսերյանցի «Հանդես թարբառախոսություն» վերնագրով ուսերեն աշխատությանը, «Հանդես ամսօրյա» պարբերականում «Նոր հրատարակությունք» ենթավերնագրի տակ տպագրած անոտացիայի մեջ խուելով այս աշխատության մասին, համոզմունք է հայտնում, որ «Լեզվագետները ապահովանական շնորհակալությամբ պիտի ընդունեն այս երկասիրության թարգմանությունը»¹⁵: Այնուհետև նա ո՞չ միայն հայերեն է թարգմանում L. Մսերյանցի աշխատությունը, այլև խոստանում է պատեհ առիթով հրատարակել «Հանդես ամսօրյալում», սակայն քանի որ ինքը «կատարելապես չի տիրապետում ուսերենին», որոշում է իր թարգմանությունը շտկելու նպատակով

12 «Հանդես ամսօրյա», Վիեննա, № 8-9, էջ 267:

13 Նույն տեղում: Ցավակի է, որ կոմիտասագիտության մեջ խոսք չկա Կոմիտասի կատարած պարբերության մասին: Գրառումը տեղ չի գտել նաև Ն. Ա. Թեյմուրազյանի կազմած «Բիբլիոգրաֆիալում», Ե., 1957 թ.:

14 Նույն տեղում, էջ 270:

15 «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1898, № 7, էջ 214:

դիմել Կոմիտասի օգնությանը: Գ. Մենեվիշյանի այս առիթով Կոմիտասին գրած ամսակը մեզ չի հասել, սակայն որոշ լուսաբանումներ տեղ են գտել Կոմիտասի գրած պատասխան նամակում:

«Միրելի բարեկամ,- գրում է Կոմիտասը Մենեվիշյանին ուղղված նամակում,- ես միշտ պատրաստ եմ, որքան ձեռքից կգտ աջակցելու Ձեր Հայրությանը: Խնդրեմ առաջըլու կարգադրություն արեք, որ ազատ ժամերին Ձեր թարգմանությունը և բազորի [ոռուերեմի, Խ. Ս.] համեմատությունը ի գրումի կամեմ»¹⁶.

Այս ամենից հետո, Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի՝ «ի գրում» արածի մասին մեզ չի աջադրվեց որևէ նոր մանրամասներ ի հայտ բերել, որոնում-ը երբ չտվեցին շոշափելի արդյունք: Սակայն հայտնի դարձավ, որ այդ՝ Գ. Մենեվիշյանի թարգմանած և Կոմիտասի խմբագրած աշխատությունը 1898 թվականին հրապարակվել է Վիեննայում «Հանդես ամսօրյա» պարբերականի հոկտեմբեր նոյեմբեր միացյալ համարում¹⁷:

1899 թվականի մարտին Լուս Մսերյանցի հեղինակած «Հայերեն բարբառախոսություն» աշխատությունը Գ. Մենեվիշյանի թարգմանությամբ ու Կոմիտասի խըմբագրությամբ լույս է տեսնում Վիեննայում նաև առանձին գրքով՝ իբրև «Ազգային մատենադարան» մատենաշարի Լ. գիրք:

Գ. Մենեվիշյանը իր կատարած թարգմանությունը իրականացրել է արևմտահայերենով, սակայն բնագրում որոշ նախադասություններ տպագրված են արևելահայերենով: Պետք է ենթադրել, որ այդ նախադասությունները իրենց վրա կրում են Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի կնիքը:

Այս գրքի առաջաբանում թարգմանիչ Գ. Մենեվիշյանը, այլևայլ բացատրությունների հետ, հարկ է համարել անդրադապնապ և իր գործունակությունը հայտնել նաև Կոմիտասի կատարած աշխատանքի վերաբերյալ.

«...Քանի որ մեզի համար,- գրում է նա, - կարևորագույն լեզվի՝ ոռուերենի ուսումն նոր էր, չխորշեցանք մեր բարեկամաց աջակցության դիմելու, որոնք սիրահոժար հանձն առին մեր թարգմանությունն աչքեր անցնելու, և իրենց կարևոր դիտողություններն ընկերու: Ի մասնավորի Էջմիածնի միարած Սողոմոնյան Կոմիտաս Վարդապետին կիայտենք հրապարակավ մեր շերմ շնորհակալությունը...»¹⁸:

Գ. Մենեվիշյանի խոսուվանությունը հիմք է տալիս ասելու, որ աշխատության խմբագրման ընթացքում պրանց միջն տեղի է ունեցել ծավալուն խոսակցություն՝ փոխարժումներ, որոնք, սակայն, մեզ չեն հասել: Անհրաժեշտության դեպքում Կոմիտասի կատարած խմբագրական աշխատանքի մասին լեզվաբանները կարող են գալ համապատասխան եզրակացության:

¹⁶ «Գրական թերթ», Ե., 1991, № 18, 14-ը հումիսի նամակը:

¹⁷ Տե՛ս, № 10-11, էջ 306-316:


¹⁸ Տե՛ս վերը Աշված գրքի «Յառաջարան», էջ Զ – Է:

Ժամանակագրական առումով Կոմիտասը հաջորդ թարգմանչական աշխատանքը կատարել է 1904 թվականին, երբ գտնվում էր Էջմիածնում և աշխատում Հոգևոր Ծեմարանում՝ որպես երաժշտության ուսուցիչ և երգչախմբի ղեկավար: Հենց այս թվականի ընթացքում էլ առ ձեռնարկում և իրականացնում է Ֆրից Ալբերգի¹⁹ «Զայնամարզություն» վերագրով աշխատության թարգմանությունը: Թե ո՞րն է եղել այս գործի թարգմանությունը ձեռնարկելու շարժափթռ, մեզ չըհաջողվեց պարզել, Կոմիտասը այդ մասին ոչ մի հավաստիացում չի թողել: Հայվանական ենթադրությունն այն է, որ այդ ձեռնարկումը կատարված է եղել Ծեմարանի ուսուցման բնագավառում որոշակի ծրագրերի գործադրման հետ: Անհավանական չէ, որ Կոմիտասը այդ բանն արել է ավելի հեռուն գնացող ծրագրերի իրականացման նկատառումով՝ թերևս կապված նաև երաժշտանոց հիմնելու մտադրության հետ:

Թարգմանության մասին որոշ պատկերացում տալու նկատառումով, հարկ համարեցինք մի հատված ներկայացնել ընթերցողների ուշադրությանը.

Թեև խոսափողն իր կազմով ինքնարեր է գործում, բայց և կարևոր է իմանալ, թե ի ն չ ե ղ ա ն ա կ ո վ է ձայն առաջ գալի: Եղր մենք կամենում ենք երգել, ձայնալարերը սկսում են անմիջապես ինքնայտինքյան գործել, նոցա շարժական ծայրերը մոտենում են իրար, ձգվում են, լարվում և ձայնանցը փակում, ցնցույիների հետև գտնված եռանկյան ճնշեք ծածկվում է, իսկ թոքերիցն արտահոսող օդըն էլ ձգված լարերը ենթարկում է շարժողության, և ձայնը պատրաստ է: Որպեսզի ձայնալարերի տատանման եղանակը լավ ըմբռնենք, նախապես պետք է պարզենք: Հենց այն րոպեին, երբ պետք է ձայնը հնչել սկսե, ձայնալարերը հանգիստ են, այսինքն դիրքը հավասարակշիռ է: Զայնանցն էլ փակ է: Զայնը սկսելու րոպեին՝ տակից օդի հոսանքը ճնշում է ձայնալարերի վերա, որոնց արտաքին ծայրերը կորանում են կողքի դեպի վեր և միայն հաստատոն ծայրերն են դեռ միացած մնում: Այսպես, ձայնարանը բացվում է և օդին տալիս է ազատ ելք: Բայց հենց այդ օդը խանգարում է ձայնալարերի հավասարակշռությանը, իսկույն առաջականության ուժն է առաջ գալի և փորձում է նոցա նախկին հավասարակշռությանը բերել: Սկսում է օդի հոսանքի և առաջականության մեջ կոիվ,

¹⁹ Ֆրից Ալբերգ - Մեզ չհաջողվեց տեղեկություններ հայտնարերն այս հեղինակի ինքնության վերաբերյալ:



Դաշտավայրության
անձնագիր պահպանության
ուժամբ պահպանության
մեջ մտնելու մասին

որ Վերջանում է, երբ պարտություն է կրում օդի հոսանքը, իսկ ձայնալարերն ըսկում են, ստիպված իրենց նախկին դրությունը բռնել...»^{20:}

Կոմիտասի կատարած թարգմանություն-ընթիւ մասին մի հետաքրքրական ու արժեքա-վոր դրվագ պահպանվել է նաև Աղավնի Մեսրոպյանի հուշերում: «...Փարիզի հայտնի Միշազգային երաժշտական համագումարեն վերադարձին,- գրում է Աղավնի Մեսրոպյանը.- Կոմիտասի բերած երաժշտական բազմաթիվ գրքերուն մեջ կային նաև շաքը մը ֆրանսիական ու գերմանական գունավոր պատկերազարդ երաժշտական մանկական գրքովկներ»: «Այդ գրքերն ունի քանին, - տո-դատակի ծանոթագրության մեջ գրում է Ա. Մեսրոպյանը, - ինչպես նաև Կոմիտասի ձեռ-քվ կատարված թարգմանության ձեռագիրը (ընդգծում մերն է, Խ. Ա.) այժմ կգտնվին Երևանի կոմիտասյան արխիվի մեջ»^{21:}

Մեզ չհաջողվեց Կոմիտասի արխիվում հայտնաբերել Ա. Մեսրոպյանի հիշատակած այդ մանկական գրքերն ու «թարգմանության ձեռագիրը», սակայն հուշագրողի գրառման մեջ պահպանված տեղեկությունը ինքնին հետաքրքիր է ու մի նոր կողմից է բացահայտվում Կոմիտաս թարգմանչի մտապնությունը: «Կոմիտասի երազն էր, - շարունակում է հուշագիրը, - ատոնց օրինակով գունավոր պատկերազարդ ե-րաժշտական գրքովկներ կազմել և հրատարակել իր սիրելի հայ մամուկներուն հա-մար»^{22:}

Այս ամենով, սակայն, չեն ամբողջանում Կոմիտասի կատարած թարգմանու-թյունները, ուստի կոմիտասագիտությունը պետք է շարունակի իր հետազոտական աշխատանքները:

Հայության յախության գործության մասին
ու բարեկարգության հայության յախության
պահպանության մասին առաջարկություն

²⁰ Տե՛ս 2Ա.Գ.Ա.թ, Կոմիտասի ֆ. 747, էջ 13-14: Մեզ հայտնի է, որ երաժշտագետ Տիրամ Լոքմագովյանը գրավվում է Կոմիտասի այս թարգմանության ձեռագիրը տպագրության նախապատրաստելու աշխատանքով: Հաջողություն ենք ցանկանում գրան այդ երատարակությունը իրականացնելու գոր-ծում:

²¹ Տե՛ս «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Ե., 1960, էջ 265:

²² Նոյն տեղում: